FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.
Հայաստան

ԼԻԲԵՐԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԿ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԵՎ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ. ՈՐՏԵՂ Է ՍԿՍՎՈՒՄ ՄԵԿԸ ԵՎ ԱՎԱՐՏՎՈՒՄ ՄՅՈՒՍԸ

Տաթևիկ Մատինյան

ԶԵՌՆԱՐԿ

ՀՏԴ 342.727:341.231.14
ԳՄԴ 67.400.32+67.911.11
Մ 333

Հրատարակող
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11
0009, Երևան, ՀՀ

Կայք - https://www.freiheit.org/south-caucasus
Facebook - https://www.facebook.com/FNFARMENIA

Հեղինակ
Տաթևիկ Մատինյան

Հայերենի էջադրում
Արուսյակ Օհանյան

Տառատեսակ
HayRoboto

Հրապարակման տարեթիվ
2022 թ.

Խոսքի ազատությունը նպատակն է բացահայտել ճշմարտությունը՝ քաղաքակիրթ և փաստարկված երկխոսության միջոցով, սակայն այն երբեք չպետք է ծառայի որպես վահան՝ ի պաշտպանություն ատելության խոսքի, որը խտրականության և անկարգությունների, հանցագործությունների և քաոսի կարող է հանգեցնել: Ցավոք, մեր օրերում ատելության խոսքն արդյունավետորեն կիրառվող գործիք է ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհասփյուռ, կիրառվում է այլընտրանքային կարծիքի լռեցման համար և առանցքային իրադարձությունների հանրային ընկալման ձևավորման համար: Այստեղ առանցքային է խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանագծումը:

Սույն աշխատությունը ներկայացնում է խոսքի ազատության և ատելության խոսքի դրսևորումների ամրագրումը ներպետական օրենսդրության մեջ և միջազգային կարգավորումներում: Ձեռնարկը կարող է օգտագործվել որպես կրթական և տեղեկատվական ուղեցույց:

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել *Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած կարծիքների և դիրքորոշումների համընկնումը Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հետ պարտադիր չէ:*

© Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 2022
© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2022

ISBN 978-9939-1-1529-0

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ 8

2 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ 12

3 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ 20

3.1 Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ կատարելը 20

3.2 Բռնության կոչերը որպես հանցագործություն 23

3.3 Վիրավորանքը որպես հանցագործություն 24

4 ՁՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ 26

ԱՄՓՈՓՈՒՄ 32

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 34

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ 36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից ժողովրդավարական աշխարհակարգում ամուր հիմքեր ունեն մարդու իրավունքները: Մարդու իրավունքների և ազատությունների իրացման երաշխավորումը աներկբա հրամայական է քաղաքակիրթ ժողովրդավար աշխարհի բոլոր պետությունների համար: Մարդու՝ որպես բարձրագույն արժեքի, իրավունքները ամրագրված են բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերում, որոնք իրենց հերթին համարվում են ուղենշային ակտեր ներպետական իրավական համակարգերի ձևավորման գործում:

Խոսքի ազատությունը (մասնավորապես՝ կարծիք արտահայտելու ազատությունը) մարդու հիմնական իրավունքերից է, որը ճանաչվում է ողջ քաղաքակիրթ աշխարհի կողմից, և իրավացիորեն կարելի է պնդել, որ առանց խոսքի ազատության, իսկապես կխարխլվեն արդի աշխարհի ժողովրդավարական հիմնասյուները: Խոսքի ազատության մասին խոսելիս պետք է նկատել, որ այն ունի ոչ միայն անհատական նշանակություն, այլ նաև հիմնարար սկզբունքներից է՝ հասարակությունների և պետությունների զարգացման համար, մասնավորապես խոսքի ազատությունը նպաստում է երկրի լավ կառավարմանը՝ թույլ տալով քաղաքացիներին տեղեկացնել իշխանություններին իրենց մտահոգությունների մասին, փաստարկված և քաղաքակիրթ երկխոսության արդյունքում նպաստելով պետության զարգացմանը: Երբ մարդիկ կարող են անվախ և բացահայտ խոսել իրենց հուզող խնդիրների մասին, իշխանության ղեկին հայտնվածները տեղեկացվում են հասարակությանը հուզող հարցերի վերաբերյալ և հնարավորություն են ունենում համարժեք արձագանքել դրանց: Խոսքի ազատությունը երաշխավորում է, որ նոր օրենսդրության կամ կառավարության ծրագրերի վերաբերյալ բոլոր առաջարկները ուշադիր դիտարկվեն հանրության կողմից և մարդկանց կողմից ներկայացվի արձագանք:

Հարկ է նկատել, որ ժամանակակից աշխարհում ոչ միայն անհատը չի կարող ապրել առանց խոսքի ազատության, այլ նաև պետությունը, քանի որ այլապես տեղի կունենա «անհատ-հասարակություն-պետություն» շղթայի խաթարում, առանց որի ժողովրդավար աշխարհը չի կարող զարգանալ և գոյություն ունենալ: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանալով ժողովրդավարական պետություն, երաշխավորում է անձի խոսքի ազատությունը և ապահովում այդ իրավունքի իրացումը՝ հնարավորինս

արդյունավետ արտացոլելով միջազգային լավագույն փորձառությունն ու առաջադեմ կարգավորումները ներպետական օրենսդրության մեջ:

Իրավունքի երաշխավորումը և դրա իրացման ապահովումը իրապես մարդուն շնորհում է ազատություն և պաշտպանություն, բայց որտեղ կա իրավունք, այնտեղ էլ առկա է իրավունքի խախտման հնարավորություն և, այս բանաձևը կիրառելի է նաև խոսքի ազատության և, մասնավորապես, արտահայտվելու իրավունքի համատեքստում: Խոսքի ազատությունը, ինչպես ցանկացած այլ իրավունք, ունի իր սահմանները: Այսպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը, որը սահմանում է արտահայտվելու ազատությունը, իր իսկ երկրորդ մասով նախատեսում է սույն իրավունքի սահմանափակումը, որը ձևակերպված է հետևյալ կերպ. «2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»[1]:

Ներկայումս, սակայն, խոսքի ազատության չարաշահում է դրսևորվում, ինչը հանգեցնում է երկրով մեկ ատելության խոսքի լայն տարածման: Ստացվում է, որ խոսքի ազատության «մետաղադրամի հակառակ կողմում» է հայտնվում ատելության խոսքը:

Խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանազատման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ որոշ դեպքերում խոսքի ազատության և ատելության խոսքի միջև հստակ սահմանի տարաջատումը անհնար է, և դրանում է նաև կայանում այս երևույթի դեմ պայքարի դժվարությունը, քանի որ պայքարելով ատելության խոսքի դեմ, կամա թե ակամա, հնարավոր է սահմանափակել խոսքի ազատությունը, որոշ դեպքերում նույնիսկ խախտելով համաչափությունը:

Ատելության խոսքի տարածումը ներկայումս դարձել է համաշխարհային խնդիր, այդ իսկ պատճառով պետությունները և միջազգային կազմակերպությունները սկսել են ակտիվ պայքար մղել ատելության խոսքի տարածման դեմ: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է նաև, նախևառաջ, խնդրի ձևակերպումը: Ներկայումս դժվար է գտնել «ատելության խոսք» եզրույթի հասկացությունը:

1 https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870

Այսպես օրինակ նպատակ ունենալով ապահովել միասնական գործիքակազմ ՄԱԿ-ի ինստիտուտների համար, ՄԱԿ-ի Ատելության խոսքի ռազմավարության և գործողությունների ծրագրում սահմանում է ձևակերպվել, որտեղ ատելության խոսքը ներկայացվում է որպես… «ցանկացած բանավոր հաղորդակցություն, գրավոր խոսք կամ վարքագիծ, որը ոտնձգություն կամ նվաստացուցիչ կամ խտրական լեզու է կիրառում՝ ուղղված անձին կամ խմբին՝ պայմանավորված նրանց ովևությամբ, այլ կերպ ասած՝ ելնելով նրանց կրոնից, էթնիկական պատկանելությունից, ազգությունից, ռասայից, մաշկի գույնից, ծագումից, սեռից կամ ինքնության այլ գործոնից»[2]:

Ներպետական մակարդակներում պայքարը տարվում է ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական գործիքակազմերով՝ օրենսդրական կարգավորումներ նախատեսելով՝ ընդհուպ մինչև քրեական պատասխանատվություն:

Ատելության խոսքի տարածումից անմասն չէ նաև ՀՀ-ն: Հասարակական հարաբերություններ է ներմուծվել և արմատավորվել ատելության խոսքը իր բազմաթիվ դրսևորումներով՝ վիրավորանք, զրպարտություն, բռնության կոչեր և այլն: Այս ամենը հասարակության անվտանգության և համերաշխության համար լուրջ սպառնալիքներ են, և դրանց դեմ պայքարը ներկայումս օրակարգային է:

Սույն ձեռնարկում նախատեսվում է իրավական տեսանկյունից վերլուծել խոսքի ազատության և ատելության խոսքի իրավական ասպեկտները, հստակեցնել դրանց սահմանը, անդրադառնալ ատելության խոսքի դեմ իրավական պայքարի ներպետական գործիքակազմին՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ այլ երկրներում՝ դրանք համադրելով միջազգային ատյանների կողմից ներկայացվող դիրքորոշումների և կարծիքների հետ:

2 https://www.un.org/en/hate-speech/understanding-hate-speech/what-is-hate-speech?gclid=CjwKCAjwsMGYBhAEEiwAGUXJaaJblguXJMxDX8rnxiZBjr4dFBEu2x2XdKoh1B8OV81jSbes4tdn3RoCmv4QAvD_BwE

1 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Խոսքի ազատությունը կամ կարծիք արտահայտելու ազատությունը մարդու հիմանարար իրավուքներից են և ամրագրված են բազմաթիվ միջազգաին փաստաթղթերում, ինչպիսիք են «Մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին[3]» եվրոպական կոնվենցիան, Մարդու իրավունքերի համընդհանոր հռչակագիրը[4], «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին[5]» միջազգային դաշնագիրը: Այս միջազգային ակտերը հիմք են հանդիսացել խոսքի ազատության իրավունքի հետագա զարգացման համար և նախանշել դրա զարգացման ուղղությունները: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 10-րդ հոդվածը՝ «Արտահայտվելու ազատություն» վերտառությամբ, բովանդակում է հետևյալը. *«Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում»:*

Վերլուծելով ՄԻԵԿ 10-րդ հոդվածը կարող ենք հանգել եզրակացության, որ խոսքի (արտահայտվելու) ազատության իրավունքի բովանդակությունը ներառում է հետևյալ բաղադրատարրերը.

- **Կարծիք ունենալու և այն արտահայտելու իրավունք,**
- **Տեղեկատվություն ստանալու և այն տարածելու իրավունք,**
- **Անկախ աղբյուրներից տեղեկատվություն ստանալու իրավունք,**

Այս իրավունքերից մեկը կարծիք ունենալու և այն ազատ կերպով արտահայտելու իրավունքն է: Կարծիք ունենալու իրավունքը

3 Ընդունվել է Եվրոպայի խորհրդի կողմից 1950 թ. նոյեմբերի 4-ին:

4 Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից 1948 թ. դեկտեմբերի 10-ին, 217 Ա III:

5 Ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 1996 թ. դեկտեմբերի 16-ին, 2200 Ա XXI:

խոսքի ազատության այն բաղադրատարրն է, որը, ըստ ԵԽ նախարարների կոմիտեի, ենթակա չէ սահմանափակման. *«Այս իրավունքի ցանկացած սահմանափակում դեմոկրատական հասարակության էության հետ անհամատեղելի կլինի[6]»:*

Այս իրավունքը ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ[7]: Սահմանադրության 42-րդ հոդվածը սահմանում է, որ *«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»:* Այս սահմանումը գրեթե նույնական է ՄԻԵԿ և մյուս միջազգային ակտերի սահմանումների հետ:

Կարևոր է նաև նշել, որ կարծիք արտահայտելու ազատությունը նշանակում է, որ անձը կարող է ազատորեն հրաժարվել արտահայտել իր կարծիքը, ինչպես նաև անձը կարող է ազատորեն հրաժարվել նախկինում իր կողմից արտահայտված կարծիքներից, այսպիսով՝ խոսքի ազատությունը, ինքն իրենով, նախատեսում է նաև լռության և չխոսելու ազատություն:

Խոսքի ազատությունը իրենից ենթադրում է ոչ միայն բանավոր, այլ նաև գրավոր խոսքի ազատություն: Ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված՝ թերթերին և գրքերին զուգահեռ գրավոր խոսքի արտահայտման հարթակներ են դարձել նաև սոցիալական ցանցերն ու մնացյալ էլեկտրոնային ռեսուրսները, որտեղ ևս գրավոր խոսքի ազատության պաշտպանվածությունը խիստ կարևոր է: Այնուամենայնիվ, արտահայտվելու ազատությունը չի սահմանափակվում միայն գրավոր և բանավոր խոսքով, այլ նաև իր մեջ ներառում է կարծիքի արտահայտումը՝ նկարների[8], գործողությունների[9], պատկերների[10] և նմանօրինակ ոչ վերբալ այլ միջոցներով: Գործողությունների միջոցով կարծիքների արտահայտման օրինակ կարող ենք համարել մեր օրերում մեծ տարածում ստացած ֆլեշմոբերը, որոնց միջոցով, օրինակ, անձանց խումբը կարող է արտահայտել իր հավաքական կարծիքը: Կարծիք կարող է արտահայտվել նաև հագուստի միջոցով[11]: Այս եղանակով կարծիքի արտահայտումը նույնպես տարածված է, և նման օրինակներ կան մեր հասարակությունում նույնպես: Հայաստանյան իրականության մեջ այս իրավունքի իրացման վառ օրինակներից է 2015 թվականը, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի

6 Report of the Committee of Ministers, in "Theory and Practice of the European Convention on Human Rights", P. Van Dijk and G. Van Hoof, Kluwer, 1990, p. 413.

7 Ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ին, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում

8 Տես՝ ECHR Müller and Others v. Switzerland, 24 May 198

9 Տես՝ ECHR Steel and Others v. the United Kingdom, 23 September 1998

10 Տես՝ ECHR Chorherr v. Austria, 25 August 1993

11 Տես՝ ECHR Stevens v. the United Kingdom, 9 September 1989

շրջանակներում զոհերի հիշատակի ոգեկոչմանը նվիրված միջոցառումների խորհրդանիշ «անմոռուկ»-ը, որը կրծքին ամրացնելով՝ մարդիկ ցույց էին տալիս իրենց վերաբերմունքը պատմական իրողությունների նկատմամբ: Արտահայտվելու ազատության իրավունքով պաշտպանվում են նաև այն օբյեկտները, որոնցում ամրագրվում են անձանց կարծիքները՝ տպագիր փաստաթղթերը, ռադիոհաղորդումները, նկարները, ֆիլմերը, գրական ստեղծագործությունները, էլեկտրոնային տեղեկատվական համակարգերը և այլն: Այսպես, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածը սահմանում է ստեղծագործության ազատության իրավունքը. *«Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն»:*

Տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց նաև զարգանում է եվրոպական իրավական միտքը, և առաջ են քաշվում նորանոր և ժամանակին առավել համահունչ դիրքորոշումներ, որոնք էլ ավելի են ընդգծում համացանցի նշանակությունը՝ խոսքի ազատության ապահովման գործում: Առաջ քաշված մտքերից է այն, որ համացանցի ոչ հասանելի լինելը կարող է համարվել անձի արտահայտվելու ազատության իրավունքի խախտում, քանի որ այդ դեպքում նա չի կարողանա կիսվել իր ցանկալի կարծիքով սոցիալական ցանցերում[12]: Այս կարծիքը ամրագրված է ԵԽ անդամ երկրներում խոսքի ազատության վերաբերյալ ներկայացված 2021 թվականի զեկույցում: Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է փաստել, որ խոսքի ազատության իրավունքի զարգացումը և սահմանների ընդլայնումը իսկապես տպավորիչ է:

Արտահայտվելու իրավունքի հաջորդ բաղադրատարրը տեղեկատվություն ստանալու և այն տարածելու իրավունքն է, որը նույնպես շատ կարևոր դեր է խաղում ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում: Տեղեկատվություն ստանալու ազատությունը ներառում է տեղեկատվություն հավաքելու և տեղեկատվություն պահանջելու իրավունքները՝ բոլոր հնարավոր օրինական աղբյուրների միջոցով, մասնավորապես հասարակության անդամների կողմից պետական մարմինների թույլատրելի տեղեկության ստացման իրավունք ունենալը: Այս իրավունքը ՀՀ-ում երաշխավորված է ինչպես Սահմանադրության արդեն վերոնշյալ հոդվածով, այնպես էլ հատուկ օրենսդրությամբ: Պետական մարմիններից տեղեկություն ստանալու, հարցումներ ուղարկելու և դրանց պատասխան ստանալու կարգը սահմանվում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով[13]: Նշված օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է. *«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը[14]»:* Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ տեղեկատվության ոչ բոլոր

12 https://rm.coe.int/freedom-of-expression-2021-en/1680a6525e

13 Ընդունվել է 23.09.2003 թ.-ին, ՀՀՊՏ 2003.11.05/55(290) Հոդ.1016:

14 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164931

տեսակները կարող են հասանելի լինել հանրությանը՝ պայմանավորված դրանց դասակարգմամբ, մասնավորապես՝ պետական մարմինը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե՝

- **պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,**
- **խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,**
- **պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,**
- **բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),**
- **խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:**

Կարծիք արտահայտելու ազատության երրորդ բաղադրատարրն անկախ աղբյուրներից տեղեկատվություն ստանալու իրավունքն է: Անկախ աղբյուրներից տեղեկատվության և գաղափարների տարածման ազատությունը մեծագույն նշանակություն ունի երկրի քաղաքական կյանքի ու ժողովրդավարության զարգացման համար: Ավելին, անկախ տեղեկատվության և գաղափարներ տարածելու ազատությունը թույլ է տալիս ազատորեն քննադատել հանրային իշխանությանը, ինչը ազատ և ժողովրդավարական հասարակության հիմնական ցուցիչներից է:

2 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Խոսքի կամ արտահայտվելու ազատությունը երաշխավորվում է ոչ միայն ներպետական օրենսդրությամբ, այլ նաև միջազգային իրավական ակտերով: Ընդհանրապես խոսքի ազատության կամ կարծիք արտահայտելու ազատության իրավունքի պատշաճ իրացման հետ կապված խնդիրները կարելի է պայմանականորեն բաժանել 3 խմբերի, իսկ այդ խնդիրների լիարժեք բացառման դեպքում է, որ հնարավոր է խոսել խոսքի ազատության կամ կարծիք արտահայտելու իրավունքի արդյունավետ երաշխավորման մասին: Վերոնշյալ խնդիրներն են՝

- **Պետության կողմից կարծիք արտահայտելու իրավունքի իրացման միջամտություն (իրավունքի էական և անհիմն սահմանափակումները),**
- **Հասարակական տիրույթում խոսքի ազատության չարաշահման դրսևորումներ, որոնք արտահայտվում են ատելության խոսքի, բռնության կոչերի տեսքով,**
- **Պետության կողմից անգործության դրսևորումը՝ ազատ խոսքի տիրույթում առաջացած հակահասարակական գործոնների դեմ պայքարում:**

Անդրադառնալով առաջին խնդրին՝ պետք է նկատել, որ ժողովրդավարական պետություններում իրավական մակարդակում կարող են սահմանվել որոշակի սահմանափակումներ խոսքի ազատության հետ կապված, սակայն դրանք պետք է լինեն բացարձակ անհրաժեշտ և համահունչ: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատության սահմանափակումներ հնարավոր են այն ժամանակ, երբ հայտարարվել է արտակարգ կամ ռազմական դրություն: ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածը նշում է, որ արտակարգ կամ ռազմական դրության հատուկ վարչահիրավական ռեժիմների պայմաններում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես

կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում: Այս սահմանադրական նորմը նաև վերահաստատվում է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին[15]» և «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին[16]» օրենքներով: Տվյալ պարագայում տրամաբանական էր և պետական անվտանգությամբ հիմնավորված, երբ պատերազմական օրերին արգելվում էր համացանցում տեղադրել ՀՀ զորքերի տեղաշարժման կամ զորամիավորումների լուսանկարներ և այլն:

Խոսքի ազատության լուրջ սահմանափակումներ ողջ աշխարհում արձանագրվեցին «Covid-19» համավարակի ժամանակ: «COVID-19-ի ազդեցությունը և դրանով պայմանավորված խոսքի ազատությանն ուղղված միջոցներ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում» հաշվետվության մեջ, մասնավորապես եզրահանգվում է, որ բազմաթիվ երկրների կառավարություններ 2020 թվականի ընթացքում սահմանափակել էին խոսքի ազատության իրավունքը, ինչը մասնավորապես դրսևորվել է ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների մի մասի սահմանափակմամբ և հիմնավորվել է որպես «fake news»-ի կամ ապատեղեկատվության դեմ պայքար: Հաշվետվության հեղինակն, այնուամենայնիվ, եզրահանգել է, որ թեև կառավարությունների այս գործողությունները անհիմն չէին, բայց միևնույն ժամանակ երբեմն սահմանափակումները չափից շատ էին միջամտում և խաթարում արտահայտվելու ազատության իրավունքի իրացմանը[17]:

Հարկ է շեշտադրել սակայն, որ պետության կողմից խոսքի ազատության կամայական սահմանափակումը երբեք չի կարող իրավաչափ լինել:

Հաջորդ և ներկայումս ամենից տարածված խնդիրը խոսքի ազատության, այսպես կոչված, չարաշահումն է, այսինքն, երբ անձինք, օգտվելով իրենց իրավունքներից, մասնավորապես՝ խոսքի ազատության իրավունքից, անցնում են թույլատրելի սահմանը և իրենց իրավունքները իրացնում ոչ բարեխղճորեն՝ հասցնելով վնաս այլ անձանց իրավունքներին: Այս իրավիճակը կարող է որակվել որպես անձի իրավունքների սահմանանցում և չարաշահում: Իրավունքի չարաշահում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ անձն իր իրավունքները իրացնելիս դուրս է գալիս իրեն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակից և վնաս է հասցնում այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին: Ահա խոսքի ազատության իրավունքի իրացման ընթացքում թույլատրելի սահմանի անցումը՝ իրավունքի չարաշումը, կարող է հանգեցնել ատելության խոսքի կամ, ինչպես ողջ աշխարհն է կոչում, «hate speech»-ի դրսևորմանը: Ատելության

15 Ընդունվել է 21.03.2012-ին, ՀՀՊՏ 2012.04.25/21(895):

16 Ընդունվել է 05.12.2006-ին, ՀՀՊՏ 2007.01.17/4(528:)

17 https://rm.coe.int/covid-and-free-speech-en/1680a03f3a

խոսքի հասկացությունը կարող է տարբեր կերպ սահմանվել, քանի որ չկա ատելության խոսքի սահմանման վերաբերյալ միասնական տեսակետ ո՛չ միջազգային, ո՛չ ներպետական մակարդակներում: Սակայն, առաջնորդվելով ՄԱԿ-ի կողմից շրջանառության մեջ դրված ձևակերպմամբ և համընդհանուր ընկալումներով, կարել է պնդել, որ ատելության խոսքն ունի հետևյալ սահմանումը. *«Անձանց կողմից հնչեցված այն կարծիքները կամ արտահայտությունները (էական չէ կարծիքի արտահայտման ձևը), որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը, ներառյալ՝ անհանդուրժողականությունը արտահայտված ազգային փոքրամասնությունների, տարբեր սոցիալական ծագում ունեցող անձանց դեմ: Ատելության խոսքի մաս են՝ անձնական արժանապատվությունը ոտնահարող, վիրավորական և զրպարտական խոսքերը, որոնք ուղղված են ոչ թե կոնկրետ անհատին, այլ անձանց որոշակի խմբի»*: Ատելության խոսքի հասկացության սահմանումը չափազանց կարևոր է խոսքի ազատության թույլատրելի սահմանի և ատելության խոսքի միջև հստակ սահմանը գծելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով ատելության խոսքի համընդհանուր ընկալումն ու արդի իրավիճակը, կարելի է ամփոփել, որ արտահայտությունը հարկ է որակել ատելության խոսք, եթե վերջինս պարունակում է՝

- **Ցեղասպանության կոչեր և դրանց արդարացում,**
- **Անձանց ուղղված արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ, վիրավորանք,**
- **Ազգային խտրականություն կամ ատելություն պարունակող արտահայտություններ և դրանց արդարացում,**
- **Անհանդուրժողականություն հարուցող արտահայտություններ,**
- **Որոշակի սոցիալական խմբի կամ անձանց/անձի նկատմամբ թշնամանք կամ ատելություն պարունակող արտահայտություններ և դրանց արդարացում,**
- **Բռնություն կամ կամայական միջոցներ գործադրելուն ուղղված կոչեր և դրանց արդարացում,**
- **Պատերազմ քարոզող կամ արդարացնող արտահայտություններ:**

Այսպիսով, եթե արտահայտված խոսքում կան վերոնշյալ տիպի արտահայտություններ, ապա կարելի է ասել, որ գործ ունենք ատելության խոսքի հետ: Ատելության խոսքի մասին խոսելիս պետք է նշել, որ դրա դեմ պայքարը արդեն բավականին ժամանակ է ինչ տարվում է եվրոպական պետությունների կողմից: Ատելության խոսքի դեմ պայքարը պաշտոնապես հայտարարող փաստաթուղթ կարող ենք համարել Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Ատելության խոսքի վերաբերյալ 1997 թվականի հանձնարարա-

կանը[18], իսկ ներկայումս արդեն ատելության խոսքի տարածումը դարձել է շատ լուրջ խնդիր ամբողջ աշխարհի համար այնքանով, որ նույնիսկ ՄԱԿ-ը անմասն չմնաց դրանից և նույնպես ներգրավվեց ատելության խոսքի դեմ պայքարին՝ սահմանելով ՄԱԿ-ի ատելության խոսքի վերաբերյալ գործողությունների ծրագիր[19]:

Կարևոր է նշել նաև, որ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ատելության խոսքը համարվում է արտահայտվելու իրավունքի չարաշահում, ուստի այդ խոսքը և կարծիքը պաշտպանված չէ ներպետական օրենսդրական և միջազգային կոնվենցիոն երաշխիքներով[20]: Որպես օրինակ հարկ է ներկայացնել ՄԻԵԴ հասցեագրված գանգատներից մեկով Դատարանի քննությանը արժանացած գործերից մեկը: Մասնավորապես շատ հետաքրքրական և ուսուցողական է ՄԻԵԴ կողմից քննված «Լերոյն ընդդեմ Ֆրանսիայի» գործը[21]: Այս գործով՝ Լերոյ ազգանունով ֆրանսիացի ծաղրանկարիչը դատապարտվել է ահաբեկչությունը արդարացնելուն օժանդակելու համար՝ իր կողմից «Ekaitza» շաբաթաթերթում տպագրված ծաղրանկարի համար: 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ծաղրանկարիչը ամսագրի խմբագրությանը ներկայացրել էր մի ծաղրանկար, որը ներկայացնում էր հարձակումը Համաշխարային առևտրի կենտրոնի երկվորյակ աշտարակների վրա (անդրադառնալով այդ օրը տեղի ունեցած ողբերգական ահաբեկչությանը): Միևնույն ժամանակ Լերոյը նկարին ավելացրել էր մակագրություն, որը ծաղրանքով նմանակում էր հայտնի «Sony» ապրանքանիշի գովազդային կարգախոսը. «Մենք բոլորս երազել ենք դրա մասին... Համասը դա արեց» («Sony»-ն դա արեց»): Այս գործով ՄԻԵԴ-ը համարեց, որ ծաղրանկարը ոչ այնքան քննադատել էր ԱՄՆ-ին, այլ ավելի շատ աջակցել և փառաբանել է բռնության կիրառությունը: Դատարանը նաև արձանագրել է, որ նկարն ուղեկցող մակագրությունում նշված արտահայտությունը ցույց է տալիս, որ նկարիչը արտահայտել է իր բարոյական աջակցությունը նրանց, ում նա համարում է 2001 թ.-ի սեպտեմբերի 11-ի հարձակումների հեղինակներ և նսեմացրել է զոհերի հիշատակը, քանի որ նա ներկայացրել էր իր նկարը հարձակումների օրը և այն հրապարակվել է սեպտեմբերի 13-ին: Դատարանը նաև հանգել է այն եզրակացության, որ ծաղրանկարը կարող է ունենալ հասարակական լայն արձագանք, որը կարող է բռնություն հրահրել և մեծ ազդեցություն թողնել տարածաշրջանի հասարակական կարգի վրա: Եվ վերջապես, անդրադառնալով ֆրանսիական դատարանի կողմից Լերոյին քրեական պատասխանատվության ենթարկելուն՝ ՄԻԵԴ-ը այդտեղ խախտում չի գտել և նորից արձանագրել է, որ այս դեպքը չի կարող դիտվել որպես խոսքի ազատության իրավունքի պատշաճ իրացում և հետևաբար ՄԻԵԴ-ը նշել է, որ Լերոյը չի կարող պաշտպանվել ՄԻԵԿ 10-րդ

18 Տես՝ https://rm.coe.int/1680505d5b

19 Տես՝ UN Strategy and Plan of Action on Hate Speech 18 June SYNOPSIS.pdf

20 Տես՝ ECHR Sürek v. Turkey (No. 3), 8 July 1999

21 Տե՛ս ECHR Leroy v. France, 2 October 2008

հոդվածի (կարծիք արտահայտելու ազատության իրավունքի) իրավական երաշխիքներով, և այդ իսկ հիմքով Ֆրանսիայի դատարանի կողմից նրան պատասխանատվության ենթարկելը լրիվ իրավաչափ է: Եվ սա ՄԻԵԴ միակ վճիռը չէ, որ արտահայտում է նմանատիպ դիրքորոշում և արդեն իսկ եվրոպական իրավական պրակտիկայի և իրավական համակարգի համար դոգմատիկ սկզբունք է ատելության խոսքի՝ խոսքի ազատության իրավունքի երաշխիքներից չօգտվելը:

Ատելության խոսքի դեմ միջազգային պայքարի կարևոր գործիք է «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան[22]: Այդ կոնվենցիայի համաձայն՝ դրա մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բոլոր այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա, կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն:

Ամփոփելով վերոշարադրյալը, կարելի է պնդել, որ ատելության խոսքը իրավաբանորեն անպաշտպան խոսք է և չի օգտվում իրավական երաշխիքներից, ավելին՝ ատելության խոսքի նկատմամբ իրավական հարկադրանքի կիրառումը համարվում է իրավաչափ:

Ատելության խոսքի դեմ միջազգային կազմակերպությունների իրավական դիքորոշումները և դրա տարածումը զսպող կառուցակարգերը քննարկելուց հետո պետք է անդրադառնալ ատելության խոսքի կապակցությամբ կիրառելի ՀՀ ներպետական նորմերին:

ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածը սահմանում է, որ արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այս հոդվածը կարևոր է, քանի որ այն հստակորեն սահմանում է, որ ատելության խոսքի դրույթները կարող են անհամատեղելի լինել խոսքի ազատության հետ, քանի որ կարծիքի արտահայտման ազատությունը խոսքի որոշ տեսակների առնչությամբ չի կարող օգտագործվել որպես պաշտպանություն: Ավելին, Հայաստանի Սահմանադրության 29-րդ հոդվածով նաև արգելվում է խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Հետևաբար, Հայաստանի Սահմանադրության համաձայն, ատելության խոսքի դրույթ-

22 Ընդունվել է 1965 թվականի դեկտեմբերի 21-ին:

ների առկայությունը հիմնավորված է և որոշ հանգամանքներում անհրաժեշտ՝ Սահմանադրության 77-րդ հոդվածի կիրառությունը երաշխավորելու համար:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունում ատելության խոսքը քրեականացնող նորմեր նույնպես առկա էին, մասնավորապես 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենգիրքը (նկատի է ունեցվում տվյալ օրենսգրքի մինչ 2022թ հունիսի 30-ը գործող խմբագրությունը) ատելության խոսքը քրեականացնող նորմ էր պարունակում: Խոսքը ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված հանցակազմի մասին է, որի համաձայն արգելվում են ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները: Ատելության խոսքի դեմ պայքարի նպատակով ՀՀ քրեական օրենսգիրք ներմուծվել էր նաև 226.2 հոդվածը, որը, կարելի է ասել, լրացնում էր 226-րդ հոդվածի կողմից բաց թողնված հատվածները: Ատելության խոսքի մասին կարելի է խոսել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածի մասին խոսելիս, որը քրեականացնում էր անձին ծանր վիրավորանք հասցնելը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ներկայումս գործող ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա ծառայողական գործունեության հետ, վիրավորանք հասցնելու կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու (հոդված 494) և զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելու՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունը մեկ այլ զինծառայողի կողմից նվաստացնելու (հոդված 524) դեպքերի համար:

Ուշագրավ է, ատելության խոսքի տարածման կանխարգելման գործում նաև մասնագիտական կազմակերպությունների ներքին կարգավորումների առկայությունը Հայաստանում: Այսպես ՀՀ-ում գործող ԶԼՄ-ների մեծամասնությունը ընդունել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը[23], որով նախատեսվում են մի շարք դրույթներ, որոնցով արգելվում է՝ ռասայի, տարիքի, կրոնական, ազգային պատկանելության, սեռական կողմնորոշման, և այլնի պատճառով մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքը, ինչպես նաև այդ կանոնագիրը պարունակում է նորմ, ըստ որի՝ ազգային կամ կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն քարոզելու կամ քաղաքական, սոցիալական, սեռական հատկանիշներով պայմանավորված խտրականությունը կամ ատելության խոսքը բացառելու և բռնություն, պատերազմ, ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հերքում քարոզելն արգելելվում է:

23 https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf

Հաշվի առնելով ազատ խոսքի և ատելության խոսքի սահմանների միջև անջրպետի բացակայությունը՝ իրավակիրառողների կողմից բռնության կոչի առկայության հաստատման համար անհրաժեշտություն է դառնում հստակ չափանիշների առկայությունը: Տարբերակելու համար, թե հրապարակային արտահայտությունները թույլատրելի խոսք է, թե՝ ատելության խոսք, միջազգային իրավունքում սահմանված են վեց չափանիշներ, որոնցից օգտվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այդ չափանիշները սահմանված են «Ռաբաթի» գործողությունների ծրագրում[24] ու դրանք հետևյալն են.

- **համատեքստը,**
- **խոսքը արտահայտողի անձը,**
- **դիտավորությունը,**
- **բովանդակությունը և ձևը,**
- **ատելության խոսքի աստիճանը, սրությունը, և**
- **վնասի հնարավորությունը:**

Միայն այս բոլոր չափանիշներին հստակ պատասխան տալու դեպքում իրավակիրառ մարմինը, դատարանը կարող է հանգել եզրակացության որ գործ ունի ատելության խոսքի և ոչ թե իրավական պաշտպանությամբ օժտված խոսքի հետ:

Ամփոփելով՝ հարկ է նկատել, որ ատելության խոսքը չի կարող պաշտպանվել խոսքի ազատության պաշտպանության համար նախատեսված երաշխիքներով, և այլոց իրավունքների ոտնահարումը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես մեկ այլ իրավունքի իրացման դրսևորում:

24 https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced

3 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ կատարելը

Շատ դեպքերում ատելության խոսքը կարող է այն աստիճանի վտանգավոր լինել հասարակության համար, որ պետությունը ստիպված լինի դրա դեմ պայքարել քրեական ներգործության միջոցներ գործադրելով: Այս իրավիճակը խորթ չէ նաև մեր հասարակությանը: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը ի սկզբանե պարունակել է ատելության խոսքը զսպող հանցակազմ, այն է՝ օրենսգրքի 226-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է սահմանում ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ կատարելու համար: Հանցագործությունը դրսևորվում է հոդվածում նշված գործողություններից որևէ մեկի կատարմամբ, դրանք են՝

- **ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն ուղղված գործողությունները**
- **ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները**
- **ռասայական գերազանցությանը ուղղված գործողությունները:**

Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն ուղղված գործողություններ են հանդիսանում այնպիսի գաղափարներ կամ հայացքներ տարածելը, որոնք խարխլում են վստահությունն ու հարգանքը որևէ ազգի, ռասայի կամ կրոնական դավանանքի նկատմամբ, ատելություն են սերմանում որևէ ազգի, ռասայի կամ կրոնական դավանանքի ներկայացուցիչների ապրելակերպի, մշակույթի, ավանդույթների ու սովորույթների

նկատմամբ[25]:

Ազգային արժանապատվությունը ստորացնելուն ուղղված գործողություններ են անձի ազգային պատկանելության հետ կապված նրա պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող տեղեկությունների տարածումը:

Ռասայական գերազանցությանը ուղղված գործողություններ կարող են համարվել տվյալ ռասայի ընտրյալ լինելու, այլ ռասաների համեմատ իշխանական գերակայությամբ օժտված լինելու, նշված ռասայի համար՝ ի համեմատ մյուսների ավելի արտոնյալ իրավիճակ սահմանելուն ուղղված կոչերը:

Այս հանցագործության գլխավոր տարրերից է հանցագործության նպատակը, այն է հնչեցված խոսքերը կամ կատարած գործողությունները պետք է հետապնդեն ազգային արժանապատվությունը նվաստացնելու, ազգային թշնամանք հարուցելու և ռասային գերակայություն հաստատելու նպատակ: Եթե նպատակը չկա, ապա նաև չկա հանցագործությունը, այս դեպքում նպատակը հանցակազմի կարևոր տարր է համարվում: Նմանատիպ մեկնաբանություն է կատարել նաև ՀՀ վերաքննիչ դատարանը ԵԿԴ/0253/01/11 քրեական գործի քննությամբ կայացված որոշման մեջ:

Այս հանցակազմի առկայությունը իսկապես անհրաժեշտություն է, չնայած ՀՀ-ի մոնոէթնիկ պետություն համարվելուն, միևնույն է ՀՀ-ում կողք կողքի ապրում են տարբեր ազգեր՝ հայեր, հույներ, ասորիներ, եզդիներ և այլն և միանշանակ այս ազգերի մեջ ատելության սեպ խրելը կամ մեկը մյուսի նկատմամբ գերակայություն հաստատելը մեծ հանրային վտանգավորություն է ներկայացնում: Այդ իսկ պատճառով նման նորմի առկայությունը ամբողջությամբ ուղղված է «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի նպատակների իրականացմանը:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ դրված նոր ՀՀ քրեական օրենսգրքում այս հանցակազմը ոչ միայն պահպանվել, այլ նաև ընդլայնվել է: Նոր քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը սահմանում է, որ հանցագործություն է համարվում. «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը»:

Այս հանցակազմի բովանդակությունը ավելի բարդ է, քան 2003 թվականի օրենսգրքինը և իր մեջ ներառում է քրեական օրենսդրությամբ պաշտպանված

25 Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Երևանի պետ. համալս. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012 – 1056 էջ:

հասարակական հարաբերությունների ավելի լայն շրջանակ: Ի տարբերություն նախկին օրենսդրական կարգավորումների՝ ներկա կարգավորումը նախատեսում է ոչ միայն ազգային, կամ ռասայական թշնամանք տարածելը այլ նաև՝

- **էթնիկ (էթնիկ խտրականությունը կապված է ոչ թե մարդու ներկայիս ազգության հետ, այլ նրա ծագման հետ: Օրինակ՝ մարդը կարող է իրեն ազգությամբ հայ համարել, բայց էթնիկական ծագումով լինել այլազգի) պատկանելությամբ հիմնավորված խտրականության տարածումը**
- **Սոցիալական ծագմամբ պայմանավորված թշնամանքի խտրականության տարածումը**
- **Կրոնով պայնավորված խտրականության, թշնամանքի տարածումը**
- **Քաղաքական հայացքներով պայմանավորված խտրականության կամ անհանդուրժողականության, թշնամանքի տարածումը**
- **Հասարական այլ հայացքներով պայմանավորված խտրականության կամ անհանդուրժողականության, թշնամանքի տարածումը**
- **Անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն, թշնամանքի տարաշումը**

Ազգային, ռասայական, էթնիկ թշնամանք հարուցելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմեր կան գրեթե բոլոր ժողովրդավար երկրների օրենսդրություններում: Օրինակ Գերմանիայի քրեական օրենսգիրքը[26] նույնպես նախատեսում է նմանատիպ նորմ, մասնավորապես Գերմանիայի քրեական օրենսգիրքի 130-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, ով որևէ կերպ հասարակական անդորրը խախտելով՝ ատելություն է սերմանում բնակչության տարբեր ազգային, կրոնական, ռասայական, ինչպես նաև էթնիկական ծագմամբ խմբերի նկատմամբ, ենթակա է հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության: Գերմանական օրենսդրությունը անդրադարձ չի կատարել քաղաքական ատելության տարածման կատեգորիային, բայց գերմանական իրավակիրառ պրակտիկան առաջ է բերել նշված նորմի ավելի տարածական մեկնաբանություն, ըստ որի այս հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսվում բնակչության տարբեր հատվածների նկատմամբ ատելության քարոզման համար և դա կարող է կատարվել բացի ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկ չափանիշներից, նաև այնպիսի խմբերի նկատմամբ ինչպիսիք են՝ քաղաքական միավորումները, գործատուները, աշխատողները, կապիտալիստները,

26 https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/

գործազուրկները, պաշտոնյաները, հաշմանդամներ և այլն[27]: Այստեղ քաղաքական ատելության հասկացության փոխարեն օգտագործում է ատելության և խտրականությունը քաղաքական միավորման նկատմամբ արտահայտելը:

Իրավական տեսանկյունից հարկ է նկատել, որ հիմնական մտահոգությունը պայմանավորված է հոդվածի մեկնաբանության հետ, քանի որ առկա է որոշակիության պակաս: Տվյալ պարագայում ոչ լիարժեք կարգավորումների հետ կապված խնդիրը կարող է շատ անբարենպաստ հետևանքներ ունենալ հատկապես քրեաիրավական նորմի մեկնաբանման ժամանակ: Հիմնական խնդիրը նախաքննական (քննչական) մարմինների կողմից չարաշահումների կատարման ռիսկերն են, այսինքն հնարավոր են դեպքեր, երբ իրավաչափ քաղաքական կամ հասարակական դիրքորոշման համար մարդկանց մեղադրանքներ առաջադրվեն քրեական օրենսգրքի քննարկվելիք հոդվածով նշված արարքի հատկանիշներով:

3.2 Բռնության կոչերը որպես հանցագործություն

2020 թվականին կատարվեցին օրենսդրական փոփոխություններ, որով ՀՀ Քրեական օրենսգիրք ներմուծվեց բռնության կոչեր կատարելու համար քրեական պատասխանատվութուն նախատեսող նորմ: 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 226.2 հոդվածը սահմանում է. «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը...»: Օրենսդրական այս փոփոխությունը իսկապես գովելի քայլ էր, և այս օրենսդրական նորմը ոչ մի դեպքում չի կարող հակասության մեջ դրվել խոսքի ազատության հետ, քանի որ այն սահմանափակում է ատելության խոսքը, այլ ոչ թե իրավաչափ խոսքը:

Այս օրենսդրական կարգավորումը պահպանվել է նաև նոր քրեական օրենսգրքում: Մասնավորապես 2022 հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում. «Անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով

27 Головненков П. В. Уголовное уложение Федеративной Республики Германия–Strafgesetzbuch (stgb)–Научно-практический комментарий и перевод текста закона //Universitätsverlag Potsdam. – 2021. – С. 224-225.

պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելը...»:

Նոր օրենսգրքում նորամուծությունը է «....բռնություն գործադրելու հրապարակային կոչի **նպատակով նյութ կամ առարկա տարածելը**» արտահայտությունը:

Բռնության կոչերը քրեականացնող նորմեր նախատեսված են նաև մի շարք երկրների օրենսդրություններում: Օրինակ՝ Ավստրիայի քրեական օրենսգրքի 283-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանված հրապարակայնորեն հասարակական կարգը խանգարելու ունակ ձևով կամ հասարակության լայն զանգվածներին ընկալելի ձևով եկեղեցու, կրոնական կամ ցանկացած այլ խմբի նկատմամբ՝ կախված ռասայից, մաշկի գույնից, կրոնից կամ գաղափարախոսությունից, ազգությունից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, սեռից, տարիքից, սեռական կողմնորոշումից կամ նման խմբի պատկանելու հանգամանքով պայմանավորված բռնությանը հրահրելու կամ դրդելու համար:

3.3 Վիրավորանքը որպես հանցագործություն

2003 թվականին ընդունված քրեական օրենսգիրքի սկզբնական խմբագրությունում առկա էր վիրավորանքը քրեականացնող նորմ, այն է օրենսգրքի 136-րդ հոդվածը, ըստ որի՝ վիրավորանքը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը՝ պատժվել է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով: Այս հոդվածը հետագայում՝ 03.07.2010 թվականից, ուժը կորցրած է ճանաչվել, և վիրավորանքը ներառվել է մասնավոր հարաբերությունների տիրույթ՝ նախատեսելով վիրավորանքի վերաբերյալ առանձին կարգավորում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով», իսկ օրենսգրքի 1087.1 հոդվածը արդեն կոնկրետ սահմանում է, որ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Օրենսդիրը նույն հոդվածով վիրավորանքի ժամանակ անձի իրավունքների պաշտպանության մի քանի եղանակներ է սահմանել, մասնավորապես՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

- **հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.**

- **եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.**
- **սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել(հատկանշական է, որ հայցվելիք փոխհատուցման շեմը բարձրացել է ծանր վիրավորանքի քրեականացման օրենսդրական փոփոխությունից մի քանի ամիս առաջ և այդ քայլը օրենսդիրը նույնպես հիմնավորել է հանրային կյանքում շատացող վիրավորանքի դեմ պայքարով):**

Չնայած այն հանգամանքին որ վիրավորանքը 10 տարուց ավել է, ինչ դուրս էր եկել հանրային իրավական վերահսկման տիրույթից, օրենսդիրը 2021 թվականին որոշեց կրկին քրեականացնել անձին վիրավորելը: Այդ օրենսդրական փոփոխությամբ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք ներմուծվեց 137.1 հոդվածը, որի համաձայն հանցագործություն էր համարվում անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը: Օրենսդրի այս քայլը մեծ հանրային հնչեղություն ստացավ և արժանացավ բազմաթիվ քննադատությունների ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից: Արդյունքում, 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով անձին վիրավորանք հասցնելն այլևս չի համարվում հանցագործություն, իսկ ծանր վիրավորանք կատարելու հիմքով արդեն իսկ հարուցված քրեական գործերը ենթակա են կարճման:

Անդրադառնալով վիրավորանքի քրեականացման միջազգային փորձին՝ հարկ է նկատել, որ բազմաթիվ քաղաքակիրթ երկրներ ունեն նմանատիպ նորմեր իրենց քրեական օրենսդրություններում, դրանցից են՝ Գերմանիան, Լեհաստանը, Հունաստանը, Իսլանդիան, Լյուքսեմբուրգը և այլն: Գերմանիայի քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ վիրավորանքը պատժվում է ընդհուպ ազատազրկմամբ: Այսպիսով, հարկ է նկատել, որ չնայած որոշ միջազգային կառույցների կողմից հնչեցված քննադատություններին[28], քաղաքակիրթ աշխարհի պետություններում ընդունված է համարվում վիրավորանքի քրեականացման պրակտիկան, և հայկական օրենսդրի նման դիրքորոշումը չենք կարող համարել արտասովոր և անընդունելի երևույթ:

28 Armenia: Freedom on the Net 2021 Country Report | Freedom House

4 ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Աշխարհում խոսքի ազատության տարածումը հիմք դրեց ոչ միայն ճշմարտացի խոսքի տարածմանը, այլ նաև ստի տարածմանը, ինչը իսկապես բացասական երևույթ է: Ստի տարածումը առաջացնում է անձնական լարվածության, երբեմն նաև՝ թշնամանքի մթնոլորտ: Որպես կանոն, անձի պատիվը արատավորող սուտ խոսքերը ավելի շատ են տարածվում, քան դրանց ժխտման վերաբերյալ հայտարարությունները: Այս իրավիճակը շատ դիպուկ է բնորոշել Միացյալ Թագավորության նախկին վարչապետ Ուինսթոն Չերչիլը. *«Սուտը հասցնում է անցնել աշխարհի կեսով, մինչ ճշմարտությունը հագնում է իր տաբատը»:*

Ոչ ճշմարտացի խոսքի տարածման հիմնական թիրախը անձի պատվի, հեղինակության, անվան արատավորումն է: Այսպիսի խոսքը իրավաբանության տեսանկյունից համարվում է զրպարտություն: Եթե փորձենք պարզ ձևով սահմանել, զրպարտությունը անձի պատիվը և հեղինակությունը արատավորող և ճշմարտությանը չհամապատասխանող հրապարակայնորեն կատարված արտահայտությունն է:

Որոշ մասնագիտական խմբերում առկա է քննարկում այն մասին թե արդյոք զրպարտությունը կարելի է դասել ատելության խոսքի դրսևորումների թվին:

Զրպարտության սահմանումից բխում է, որ խոսքը կամ արտահայտությունը որակվում է որպես զրպարտություն, եթե՝

- **Կատարվել է հրապարակային,**
- **Այն պարունակում է անձի համբավը կամ հեղինակությունը արատավորող տեղեկություն,**
- **Հեղինակությունը արատավորող տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը և սուտ է:**

Խոսքի՝ հեղինակությունը արատավորող գնահատելու համար, դիտարկվում է այն հեղինակությունը, որը տվյալ անձը վայելում է այլ անձանց՝ հասարակության ներկայացուցիչների շրջանում

և չպետք է առաջնորդվել ինքնագնահատականով[29], հակառակ դեմքում անձի իրական կերպարը և անունը բնութագրող բառերը ոչ հաճելի լինելու դեպքում կարող են միշտ որակվել որպես զրպարտություն: Զրպարտության ակտը բաղկացած է մեկ ուրիշի մասին կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող հայտարարություն անելուց, որը անձի հեղինակությանը վնասելու նպատակ է հետապնդում: Զրպարտությունը կարող է արտահայտված լինել պնդումով, բանավոր ելույթով կամ խոսքի կամ գործողության այլ ձևերով: Նման հայտարարությունը կարող է արվել բանավոր կամ գրավոր, ինչպես նաև կարող է արտահայտված լինել տեսողական պատկերների, ձայների, ժեստերի և ցանկացած այլ եղանակով: Զրպարտություն կարող է լինել հայտարարությունը, որը հեռարձակվում է ռադիոյով կամ հեռուստատեսությամբ կամ համացանցում հրապարակված նյութը:

Այսպիսով, զրպարտության հիմքում ընկած է հեղինակության պատճառված վնասը: Արտահայտված խոսքը կարող է ուղղված լինել անձի հեղինակությանը, բայց չլինել զրպարտություն, եթե իրականում ճշմարիտ է, քանի որ մարդն ունի միայն այն հեղինակության պաշտպանության իրավունքը, որը հիմնված է ճշմարտության վրա և հայտարարությունը միայն զրպարտության կհամարվի, եթե այն կեղծ է կամ իրականությանը չի համապատասխանում:

ՀՀ-ում զրպարտության հետ կապված հասարակական հարաբերությունները ներկայումս կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ, բայց մինչև 2010 թվականը զրպարտության համար նախատեսված էր քրեական պատասխանատվություն, մասնավորապես 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն. «*Զրպարտությունը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:* Հետաքրքրական է «ակնհայտ սուտ» արտահայտությունը օգտագործելը օրենսդրի կողմից, որով օրենսդիրը ցույց է տալիս որ անձը կարող էր մեղադրվել այս հանցանքի կատարման մեջ միայն այն դեպքում, երբ իր կողմից հնչեցված արտահայտությունը կամ միտքը կատարած անձի համար ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը և նա ուղղակի դիտավորությամբ անձի հեղինակությունը արատավորելու նպատակ է հետապնդում:

Ներկայումս զրպարտության դեմ իրավական պաշտպանությունը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով, մասնավորապես այս հոդվածի ուժով անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ

29 Freedom of Expression and Defamation, 2016.Available at: https://rm.coe.int/09000016806ac95b

զրպարտություն կատարած անձի դեմ: Նույն հոդվածի 3-րդ մասը տալիս է զրպարտության սահմանումը, ըստ որի՝ զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Օրենքը նաև սահմանում է այն դեպքերը, երբ առկա են զրպարտության բոլոր հատկանիշները, բայց օրենքի ուժով այդ խոսքը չի համարվի զրպարտություն: Այդպիսիք են՝

- **դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում**
- **դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները**
- **այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:**

Վճռաբեկդատարաննիրնախադեպայինպրակտիկայումանդրադառնալով զրպարտության գնահատմանը, նշել է. «Անդրադառնալով կոնկրետ արտահայտության՝ զրպարտություն գնահատելու չափանիշներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

1. **անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,**
2. **անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային,**
3. **ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի,**
4. **ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը[30]:»**

Այսինքն վերացական, չփաստարկված արտահայտությունները չեն կարող ինքն իրենով համարվել զրպարտություն և միայն կոնկրետ փաստական

30 Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշումը

հանգամանքի վերաբերյալ արտահայտված՝ իրականությանը չհամապատասխանող, անձի պատիվը արատավորող, հրապարակային արտահայտությունը կարող է համարվել զրպարտություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քննարկման առարկա հարցի վերաբերյալ դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որևէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում(...)[31]»:

Զրպարտության մասին խոսելիս կարևոր է օրենսդրական հետևյալ կարգավորումը. «Անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի հրապարակման, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին)»: Այսինքն այն ժամանակ, երբ ՁԼՄ հրապարակումը կատարվել է անձի ելույթի ուղղակի մեջբերմամբ, չի կարող խոսք գնալ զրպարտության մասին: Վերոնշյալ հետևությունը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ հղում է կատարված տեղեկատվության աղբյուրին, սակայն նույն աղբյուրում տեղ գտած տեղեկատվությունը հրապարակված չէ բառացի կամ բարեխիղճ, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), ապա հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից:

Վերը նշված դեպքերում տեղեկատվություն հրապարակողն ինքն է համարվում զրպարտող կամ վիրավորող[32]:

Ուշագրավ է 01.01.2022 թվականից ուժի մեջ մտած կարգավորումը, ըստ որի՝ լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից և կրում է փոխհատուցման պարտավորություն, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները «Զանգվածային լրատվության մասին» օրենքով սահմանված չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության

31 Վճռաբեկ դատարանի ԼԴ/0749/02/10 որոշում

32 Հովհաննիսյան Ա. –Մեդիա Իրավունք: Ուսումնական ձեռնարկ Երևան: Հայրապետ, 2020

վերարտադրությունն են՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից: Իսկ նշված օրենքի համաձայն չնույնականացվող աղբյուր է համարվում՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ (այսուհետ՝ աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման հասցեն, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր, ապա նաև պետական հաշվառման համարը, իսկ եթե աղբյուրը տնօրինում է իրավաբանական անձը՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը: Այս փոփոխությամբ օրենսդիրը փոխեց մինչ այդ օրենսդրությամբ սահմանված այն տրամաբանությունը, որ անձը (ՁԼՄ) ազատվում է անձի պատիվը արատավորող տեղեկության համար պատասխանատվությունից, եթե կատարում է հղում աղբյուրին:

Զրպարտության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե անձը ինչ փոխատուցում կամ իրավունքի վերականգնում կարող է ստանալ դատարանի կողմից: Օրենսդիրը սահմանում է, որ զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 6000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նաև կարևոր է, որ փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը:

Զրպարտության դեմ իրավական պայքարի միջազգային փորձին անդրադառնալիս ակնհայտ է դառնում, որ բազմաթիվ քաղաքակիրթ երկրներ քրեական պատասխանատվություն են նախատեսել զրպարտության կատար-

ման համար: Օրինակ՝ Գերմանիան, Ճապոնիան, Իտալիան, Հունաստանը քրեական պատասխանատվություն են նախատեսում զրպարտության համար: Մասնավորապես Իտալիայի քրեական օրենսգրքի 595-րդ հոդվածի համաձայն՝ զրպարտություն կատարելու համար անձը կարող է դատապարտվել՝ ընդհուպ մինչև մեկ տարվա ազատազրկման:

ԱՄՓՈՓՈՒՄ

Խոսքի ազատությունը սկզբունք է, որը հնարավորություն է ընձեռում անհատին կամ հասարակությանը ազատ արտահայտելու իր կարծիքն ու գաղափարները՝ առանց իրավական հարկադրանքի միջոցների կիրառումից վախենալու:

Խոսքի ազատությունը գաղափարների շուկա է (Ideas' marketplace), համաձայն որի՝ ճշմարտությունը ի հայտ կգա ազատ, թափանցիկ հանրային քննարկման, գաղափարների մրցակցության արդյունքում:

Մտքերի ազատ և բաց փոխանակումը և հանրային երկխոսությունը իրական ժողովրդավարության կարևորագույն բաղադրիչներից է: Սակայն այս ոլորտում երևան է գալիս մեկ այլ մարտահրավեր՝ ատելության խոսքը:

ՄԱԿ-ի Ատելության խոսքի ռազմավարության և գործողությունների ծրագրում սահմանում է ձևակերպվել, որտեղ ատելության խոսքը ներկայացվում է որպես... «ցանկացած բանավոր հաղորդակցություն, գրավոր խոսք կամ վարքագիծ, որը ոտնձգություն կամ նվաստացուցիչ կամ խտրական լեզու է կիրառում՝ ուղղված անձին կամ խմբին՝ պայմանավորված նրանց ովևությամբ, այլ կերպ ասած՝ ելնելով նրանց կրոնից, էթնիկական պատկանելությունից, ազգությունից, ռասայից, մաշկի գույնից, ծագումից, սեռից կամ ինքնության այլ գործոնից» Խոսքի ազատությունը գաղափարների բախման և կառուցողական փաստարկների միջոցով ճշմարտությունը գտնելու հնարավորություն է, սակայն այն երբեք չպետք է գործիք լինի տարբեր տեսակետները լռեցնելու կամ ուրիշներին նվաստացնելու համար:

Համաշխարհային և սոցիալական հարաբերությունները զարգանում են ամեն օր, և նոր միջոցներ ու գործիքներ են կիրառվում հանրային վարքագիծը կառավարելու համար, իսկ ատելության խոսքն օգտագործվում է խոսքի ազատությունը սահմանափակելու համար: Մինչդեռ կարծիքների բևեռացումը, մարդկանց բաժանումը սևերի և սպիտակների, կողմնակիցների և հակառակորդների, որտեղ անհատը խուսափում է բարձրաձայնել իր տարբերվող կարծիքը՝ վստահ լինելով, որ արդյունքում կդառնա ատելության խոսքի թիրախ, հանգեցնում է այլընտրանքային կարծիքի լռեցմանը, հանրային կարծիքի ու պահանջների ձևավորմանը կառավարելուն:

Խոսքի ազատությունը կոչված է ճշմարտության բացահայտմանը՝ քաղաքակիրթ քննարկումների միջոցով, և այն չպետք է օգտագործվի որպես հովանոց՝ խտրականությունն ու անկարգությունը արդարացնելու համար, ինչն էլ կարող է հանգեցնել հանցագործությունների և քաոսի հաստատմանը երկրում:

Ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար նախ անհրաժեշտ է ատելության խոսքը հստակ ձևակերպել որպես ժողովրդավարության համար մարտահրավեր, հստակ սահմանել այն ներպետական օրենսդրություններում և միջազգային կարգավորումներում, հստակեցնել այն սահմանը, որը աներկբա է դարձնում յուրաքանչյուր անձի համար, թե որտեղ է խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանագիծը:

Ատելության խոսքի հետ կապված խնդիրները հնարավոր չէ արագ լուծել, բայց շատ կարևոր է հիշել, որ դա այլևս ներպետական կամ առանձին վերցրած մեր երկրի խնդիր չէ. այն դարձել է համընդհանուր մարտահրավեր: Հարկավոր է կրթել հասարակությանը, քաղաքական գործիչներին, ՀԼՄ-ների ներկայացուցիչներին, որդեգրել պատշաճ քաղաքականություն և օրենսդրություն և առաջնորդվել պարզագույն բանաձևով՝ իմ իրավունքները ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են այլոց իրավունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա

2 «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» միջազգային դաշնագիր

3 «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր

4 Report of the Committee of Ministers, in “Theory and Practice of the European Convention on Human Rights”, P. Van Dijk and G. Van Hoof, Kluwer, 1990, p. 413.

5 ECHR Müller and Others v. Switzerland, 24 May 1988

6 ECHR Steel and Others v. the United Kingdom, 23 September 1998

7 ECHR Chorherr v. Austria, 25 August 1993

8 ECHR Stevens v. the United Kingdom, 9 September 1989

9 «Տեղեկատվության ազատության մասին» օրենք

10 «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք

11 «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք

12 ECHR Sürek v. Turkey (No. 3), 8 July 1999

13 ECHR Leroy v. France, 2 October 2008

14 «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիա

15 Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Երևանի պետ. համալս. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012 – 1056 էջ:

16 Головненков П. В. Уголовное уложение Федеративной Республики Германия– Strafgesetzbuch (stgb)– Научно-практический комментарий и перевод текста закона // Universitätsverlag Potsdam. – 2021. – С. 224-225.

17 Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/2293/02/10 որոշում

18 Վճռաբեկ դատարանի ԼԴ/0749/02/10 որոշում

19 Հովհաննիսյան Ա. –Մեդիա Իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևան: Հայրապետ, 2020

20 https://rm.coe.int/freedom-of-expression-2021-en/1680a6525e

21 https://rm.coe.int/covid-and-free-speech-en/1680a03f3a

22 https://rm.coe.int/1680505d5b

23 UN Strategy and Plan of Action on Hate Speech 18 June SYNOPSIS.pdf

24 https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf

25 https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/

26 https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced

27 Armenia: Freedom on the Net 2021 Country Report | Freedom House

28 Freedom of Expression and Defamation, 2016.
Available at: https://rm.coe.int/09000016806ac95b

29 http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17588&lang=en

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Տաթևիկ Մատինյանը իրավագիտության մագիստրոս է, ՀՀ փաստաբանների պալատի անդամ է, փաստաբան 2010 թվականից: 2022 թվականին ավարտել է Սթենֆորդի համալսարանի Դրափեր Հիլս ամառային ծրագիրը: Հանդիսանում է մարդու իրավունքների և փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման մասնագետ:

Ունի շուրջ 20 տարվա աշխատանքային փորձ՝ հասարակական կազմակերպություններում և 17 տարվա իրավապաշտպան գործունեության փորձառություն:

Տաթևիկ Մատինյանն իրականացնում է մարդու իրավունքների պաշտպանություն ոչ միայն ներպետական ատյաններում, այլ նաև միջազգային դատարաններում, զոհերի շահերը ներկայացնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Նա արդեն իսկ ունի հաջողած երկու գործեր ՄԻԵԴ-ում՝ Բադալյանն ընդդեմ Ադրբեջանի և Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի գործերով:

2022 թվականի ընթացքում Տ. Մատինյանը ՄԻԵԴ է ներկայացրել Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների գանգատներն ընդդեմ Ադրբեջանի՝ դիմումատուների սեփականության իրավունքի փոխհատուցման պահանջով:

Տաթևիկ Մատինյանը մեկ տասնյակից ավելի թեմատիկ հաշվետվությունների, ձեռնարկների և ուղեցույցերի հեղինակ և համահեղինակ է:

Publisher
Friedrich Naumann Foundation for Freedom Armenia
Kh. Abovyan Street 41, office 11
0009 Yerevan
Armenia

Website: https://www.freiheit.org/south-caucasus
Facebook: https://www.facebook.com/FNFARMENIA

Author
Tatevik Matinyan

Armenian layout
Arusyak Ohanyan

Typeface
HayRoboto

Contact
Email: armen.grigoryan@freiheit.org, lusine.martirosyan@freiheit.org

Year of publication
2022

Border between Hate Speech and Freedom of Expression. Where one starts, where another ends

Freedom of expression is called to find the truth through supported and civilized discussion, and it should not be used as an umbrella for hate speech that leads to discrimination and disorder, crimes and chaos. Unfortunately, hate speech recently became an effectively used tool in Armenia and worldwide for silencing alternative opinion and managing public perception of valuable events. One of the main concerns in this regard is identification of threshold of freedom of expression and hate speech.

This publication covers the the understanding of freedom of expression and types of hate speech and their stipulation in both national and international legislation and acts. The manual can be used as an educational and awareness raising material.

Note about the publication

The publication of this report is made possible by the support of Friedrich Naumann Foundation for Freedom South Caucasus. The views and opinions expressed in this publication do not necessary reflect the position of the Friedrich Naumann Foundation for Freedom and its employees.

FRIEDRICH NAUMANN FOUNDATION For Freedom.

Հայաստան

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի
հայաստանյան գրասենյակ
Խ. Աբովյանի փ. 41, գրաս. 11, 0009, Երևան, ՀՀ
Էլ. փոստ՝ Armen.Grigoryan@Freiheit.org; Lousin.Martirossian@Freiheit.org

9 789939 115290

freiheit.org